

Մարտի Ա. ի քաղաքս Ըստամպօլ ի Ղալաթիայ, ի Թաղն Պէկօղլի կոչեցեալ ի մենարանի իմում. ի փառս Աստուծոյ՝ ամենազօրի եւ Փրկչին Յիսուսի, ամէն:», Ինչպէս կը տեսնուի՝ Թէպէտ գղջացեալ, սակայն չի համարձակիր իր անունը տալ. բաւ կը համարի իր անվերիպելի Սահէթնի մականուամբն մատնանշել ինք զինք:

Սարգիս 1725ին արդէն Հռոմ կը գլուխուէր, վասն զի նոյն Թուին աւարտած է ընդօրինակութիւնը ձեռագրի մը՝ որ միաբնակաց դէմ շարագրուած է (Անտ. Մատ. Թիւ ՄԽԳ.):

Այս գիրքն երեք մասէ բաղկացած է, շարագրուած Ստեփանոս Դաշտեցիէ, այսինքն՝ Ա. Մախաղ փշրանաց, 1700 Յունուարին յօրինուած: Ասոր յիշատակարանին մէջ կը գրուի. «Գրեցաւ եւ աւարտեցաւ ի Թուոյ փրկչին 1725 հոկտեմբերի 31, ձեռամբ Սարգիս Եպիսկոպոսի եւդոկիացւոյ, որ եմ սահէթնի ի Հռոմ քաղաքի...:», Բ. Կոչնակ ճշմարտութեան, շարագրուած 1714—5ին ընդդէմ Յովհ. Զուղայեցւոյ 1688ին տպած «Գիրք իսկապէս համառօտ... վասն հաւատոյ դաւանութեան», գրքին: Ասոր վերջը կայ՝ «Գրեցաւ եւ աւարտեցաւ սա որ կոչի՝ «Կոչնակ ճշմարտութեան», ի Թուոյ փրկչին 1725, դեկտեմբերի 25, ձեռամբ Սարգիս Եպիսկոպոսի եւդոկիացւոյ, որ եմ սահէթնի, ի սուրբ քաղաքն Հռոմ...», Գ. Խնդիր ուղղութեան, շարագրուած 1688ին Աղեքս. Ա. Զուղայեցւոյ